ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆԻ 2024 ԹՎԱԿԱՆԻ ԲՅՈՒՋԵՏԱՅԻՆ ՈՒՂԵՐՁԸ

Համայնքում առկա խնդիրների՝ ըստ առաջնահերթությունների դասակարգման և դրանց տրվող լուծումների գործում կարևոր է բյուջետային գործընթացի ճիշտ կազմակերպումը, այն է՝ բյուջեի եկամուտների հավաքագրման անհրաժեշտ մակարդակի ապահովում, հավաքագրված միջոցների արդյունավետ և խնայողական օգտագործում:

Գալիք բյուջետային տարվա համայնքի զարգացման հիմնական ուղղություններն են՝

1. Արտադպրոցական կրթության բարելավում՝ մասնավորապես շենքային պայմանների կապիտալ վերանորոգում,
2. Նախադպրոցական կրթությունը հասանելի դարձնելը համայնքի ևս մի շարք բնակավայրերում,
3. Սիսիան քաղաքի փողոցների, մայթերի և բակային հատվածների բարեկարգում,
4. Աշխատանքներ իրականացնել բազմաբնակարային բնակելի շենքերի սպասարկման բնագավառում,
5. Իրականացնել կապիտալ ներդրումներ համայնքի ճանապարհային տնտեսությունում, համայնքային սեփականություն հանդիսացող ջրագծերի նորոգման /փոխարինման աշխատանքներում,
6. Վեր հանել համայնքում առկա սոցիալապես խոցելի խմբերի խնդիրները և դրանց տալ լուծումներ՝ համայնքի լիազորությունների շրջանակներում,
7. Աղբահանության կազմակերպումը հասանելի դարձնելը համայնքի ևս մի շարք բնակավայրերում,
8. Նպաստել համայնքի մարզամշակութային կյանքի ակտիվացմանը, առողջ ապրելակերպի խրախուսմանը,
9. Խթանել զբոսաշրջության զարգացումը:

2024 թվականի բյուջեի նախագծով <<Բյուջետային համակարգի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի պահանջներին համապատասխան ձևավորված վարչական մասի պահուստային ֆոնդը նախատեսվում է օգտագործել բյուջեով չկանխատեսված ծախսերի կամ նախատեսված ծախսերի լրացուցիչ ֆինանսավորման և համայնքում կապիտալ ծրագրերի ֆինանսավորման /հակաֆինանսավորման/ նպատակով:

Վերոնշյալ թվարկված ուղղություններն իրականացնելիս անհրաժեշտ է մշտապես պահպանել համայնքի բնակավայրերի համաչափ զարգացման հայեցակարգը: Մեր ծրագրերի, նպատակների իրագործումն ուղղված է համայնքի բնականոն զարգացումն ապահովելուն և համայնքի բնակիչների կյանքի որակի բարձրացմանը:

ՍԻՍԻԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Ա. ՀԱԿՈԲՋԱՆՅԱՆ